

## Թելադրության բնագրեր

Հայաստանի ամենաբարձր լեռը Արագածն է: Նա քառազագաթ է: Լեռն Արագած է կոչվել Արա թագավորի անունով: Արագածի կատարը մշտապես ծածկված է ձյունով: Սակայն ստորոտում տարվա բոլոր եղանակներին իրենց <<հանդերձանքով>> են հայտնվում: Արագածի լանջերից բխում են սառնորակ աղբյուրներ:

Աշուն է: Վարդան պապը, Սարգիսն ու Արևիկը մտան այգի: Այգու խնձորենու, տանձենու, դեղձենու և սալորենու ճյուղերը ձկվել էին բերքի ծանրությունից: Պապը նայում էր ու հիանում իր աշխատանքի արդյունքով: Սարգիսն ու Արևիկը ուրախ, զվարթ թռչկոտում էին: Նրանք օգտվում էին այգու բարիքներից, հավաքում էին չորացած ճյուղերը, դասավորում պատերի տակ:

Արաքս գետը հայերի համար եղել է սնող, կյանք պարգևող սիրելի գետ: Դրա համար էլ ժողովուրդը գետը կոչել է Մայր Արաքս: Արաքսի մեջ են լցվում Հրազդան, Ազատ, Ողջի և Որոտան գետերը: Հնում Արաքսը լցվում էր Կասպից ծովը, իսկ այսօր միանում է Քուռ գետին:

Պինգվինները մարդկանց բարեկամներն են: Պինգվինի մարմնի և թևի փետուրները մուգ կապույտ են, իսկ փորը արծաթագույն է: Նրա մարմինը ձգված է, ձկուն: Մայր պինգվինը իր ձուն թաքցնում է փորի փափուկ բնում: Հայր և մայր պինգվինները սնվում են հերթով:

Արջը բրդոտ գազան է:Նրա ձագերը առնետից քիչ մեծ են ծնվում:Արջերն ուտում են հատապտուղներ,մրգեր, գորտեր,ծկներ:Արջը մեղր շատ է սիրում:Նույնիսկ չի վախենում մեղվի խայթոցից: Արջը ձմռանը ձագերի հետ փակվում է որջում: Նրա մեծ ձագերը օգնում են փոքրիկներին խնամելիս:

Գարուն էր : Դավիթն ու Ջվարթը գնացել էին անտառ՝ մանուշակներ հավաքելու: Օրը տաք էր ու հաճելի: Լուրթ երկնքում շողում էր ոսկեգօծ արևը և բարի օր մաղթում երեխաներին:Երեխաները երեկոյան բարձր տրամադրությամբ վերադարձան տուն:

Համբարձունը երազում է նկարիչ դառնալ:Նա արդեն նկարում է ջրաներկով, գունավոր մատիտներով և նուրբ վրձնով:Հորեղբայրը նրան նվիրել է վարդագույն,ծիրանագույն, մուգ կանաչ և դարչնագույն յուղաներկեր:

Արդեն խոր աշուն է:Օրերը ցրտել են ու կարճացել: Սկսվել են հորդ անձրևները:Տերևները թափվել են, ծառերը մերկացել, թռչուններն ու կենդանիներն արդեն նախապատրաստվել են ձմռան գալուն: Մարդիկ էլ հետ չեն մնացել նրանցից:Նրանք սիրով սպասում են ձյան սպիտակ ու նուրբ փաթիլներին:

Լեզուն մի միջոց է, որով միմյանց են հաղորդում իրենց մտքերը, փորձը:Ամեն ժողովուրդ ունի իր մայրենի լեզուն:Մեր լեզուն անցել է

Երկար ու ձիգ ճանապարհ և գոյատևել է մինչև այսօր: Հայերենը երգեցիկ , հարուստ ու գեղեցիկ լեզու է:

Սարգիսն անհամբեր սպասում էր արևածագին: Երբ լսվեցին աքաղաղի անդադար կանչերը, նա վերցրեց որդերով լի տուփը, ձկնորսական կարթը և գնաց գետափ: Նրա հետևից պոչը խաղացնելով վազում էր Ջեկոն: Նրանք հասան Հրազդան գետի ջրառատ հատվածը: Սարգիսը կարթը գցեց գետը և սպասումնալից անհանգստությամբ քարացավ:

Քամին դադարեց: Ծաղիկները դանդաղ արթնացան գիշերային քնից ու նազանքով բացեցին նուրբ թերթիկները: Եկավ առավոտյան ցողիկը և հանգստանալու տեղ խնդրեց ծաղիկներից: Ժպտացին ծաղիկները և հյուրընկալեցին ցողիկին: Երբ հուրհրաց արևը, փայլփլեց ցողիկը ու ձգվեց դեպի արևը: Արևի շողերը գուրգուրեցին ցողիկին ու թռցրին վերև:

Պայծառ, արևաշող գարուն է: Ընդարձակ այգիները ծածկվել են երփներանգ ծաղիկներով, որոնց վրա պար են բռնել գույնզգույն թիթեռներն ու ժրաջան մեղուները: Անտառը լցվել է հարավից վերադարձած թռչունների անուշ ճռվողյունով: Օդը լի է ծաղկած դեղձենիների, ծիրանենիների շշմեցուցիչ բուրմունքով: Եփրեմ պապը շրջում է ու հիանում փարթամ այգիներով, որոնք առատ բերք են խոստանում

Հորդառատ անձրև էր: Մուգ ամպեր էին հավաքվել երկնականարում: Խոտերն ու ծաղիկները փնտրում էին արևին: Հանկարծ փչեց զով քամին: Դալար խոտերն ու քնքշաբույր ծաղիկները բարձրացրին իրենց խոնարհած գլխիկները: Երկնականարում շողաց հրաշեկ արևը: Հավքերը երգեցին, ծաղիկներն ուրախ քրքջացին, տերևները պար բռնեցին: Երեմը, Օֆելյան և Էմման նստեցին ծաղկած սալորենու տակ և հյուսեցին այս հրաշք արևի հեքիաթը:

Աշուն էր: Երկինքը մռայլ էր: Անդադար անձրև էր տեղում: Անտառը թախծոտ էր, որովհետև ծառերն աստիճանաբար մերկանում էին: Նրանք հրաժեշտ էին տալիս իրենց ոսկեգույն հագուստներին: Առվակը չէր երգում: Բնությունը տխուր հառաչում էր: Նա սպասում էր ձմռան անտանելի ցրտին: Ցուրտ աշնան սառը օդի մեջ զգացվում էր ձմռան շունչը:

Իմ մորաքրոջ աղջկա անունը Վարդուհի է: Նա սովորում է Ողջաբերդի դպրոցի առաջին դասարանում: Առաջին կիսամյակում նա ցուցաբերել է բարձր առաջադիմություն: Վարդուհին իր գնահատականները մինչև տարեվերջ չի իջեցնի: Նա անպայման կպարգևատրվի գովասանագրով:

Ամառային արձակուրդների օրերին մենք մեկնեցինք Դիլիջան: Ճանապարհը օձապտույտ էր: Աղջիկները վախից նույնիսկ չէին փորձում խոսել: Նրանք զարմացած նայում էին ընդարձակ անտառներին: Մեր վարորդը համարձակ սլանում էր: Բոլորն ուրախ էին, որ ազատվեցին Երևանի հեղձուցիչ օդից

Արդեն մթնում էր: Ընդունարանում նստած մարդիկ խնդրում էին բժշկին, որ տեղեկություն տա Վարդանի որդուց: Վարդանի որդին՝ Վարդգեսը, հիվանդ էր: Բժիշկների խորհրդով նրան տեղափոխել էին հիվանդանոց:

Քաղցրաղբյուր գյուղի դպրոցականները որոշեցին հավաքել թղթի թափոն: Ամբողջ օրը երեխաները շրջեցին իրենց և կողքի գյուղի դպրոցներում: Նրանք հավաքեցին թղթի մեծ պաշար: Թղթի թափոնի հավաքման մրցույթում հաղթեցին երրորդ դասարանցիները: Նրանք մաքրել էին նաև դպրոցի բակը:

Անգեսիկը խնդրեց ընկերներին իրեն էլ վերցնել ճամփորդության: Երեխաների հետ միասին նա զարդարեց օդապարիկը: Ընդամենը մի րոպեից հետո օդապարիկը սավառնում էր, իսկ մարդիկ հիանում էին ճամփորդների քաջությամբ: Անգեսիկը օդում ուրախ երգում էր:

Շոգ ամառ էր: Մուգ կապույտ ծովի վրա լողում էր շոգենավը: Նա օգնություն էր տանում ծովափին անօգնական մնացած նավաստիներին: Շոգենավը խորտակվել էր: Նրանք ութ հոգով փրկվել էին, որովհետև հագել էին փրկագոտիներ: Նավաստիները զույգերով կարողացել էին լողալ դեպի ափ:

Դարբնոցի մոտով ցած է հոսում զրնգուն աղբյուրը: Նա աջ ու ձախ նայում, համբուրում է ափերին ծաղկած նրբաթերթ ձնծաղիկները: Ճանապարհը շատ երկար է, սակայն աղբյուրը երբեք չի հոգնում: Նա

գիտի, որ իրեն անհամբեր սպասում են զմրուխտե մարգագետինը,  
նորատունկ այգին:

Սարգիս Ոսկանյանը ձկնորս է: Նա Արեգի քեռորդին է: Մի օր  
Սարգիսն ու Ոսկանը որոշեցին գնալ գետափ՝ ձկնորսության:  
Երեկոյան տղաները հանկարծ անորոշ ձայներ լսեցին: Կամաց-կամաց  
ձայնը մոտեցավ: Նրանք սկզբում չհասկացան, թե ինչ ձայներ են:  
Հետո պարզվեց, որ գայլերի ոհմակն է ոռնում:

Էմման, Էմինը և Երանուհին կեսօրին գնացին կրկես: Ներկայացմանը  
մասնակցում էին տարբեր կենդանիներ: Փոքրիկ շնիկները շատ լավ  
երգում էին: Զվարճալի կապիկներն անընդհատ պարում էին: Իսկ  
հպարտ առյուծները երջանիկ ցատկում էին կրակի միջով:  
Երեխաներին շատ դուր եկավ ներկայացումը:

Շատ տարիներ առաջ, երբ թուղթը դեռևս հայտնի չէր, մարդիկ գրում  
էին մագաղաթի վրա: Մագաղաթը պատրաստում էին կենդանիների  
ձագերի մորթուց: Հայերեն ամենափոքր գիրքը լուցկու տուփից էլ  
փոքր է: Այն պատրաստված է նորածին ուլի մորթուց: Այժմ գրում են  
թղթի վրա, որովհետև այն ավելի հարմար է և էժան:

Երևանը Հայաստանի մայրաքաղաքներից է: Այն հիմնել է Արգիշտի  
թագավորը: Երևանը գտնվում է Արարատյան դաշտում՝ Մեծ և Փոքր  
Մասիսների դիմաց: Քաղաքի միջով հոսում են Հրազդան և Գետառ

գետերը: Գեղեցիկ է Հրազդանի ձորը, որը երևանցիների ամառային հանգստի վայրերից մեկն է:

